Հավելված
ՀՀ կառավարության 2018 թ.
փետրվարի 15-ի նիստի N 6
արձանագրային որոշման

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2018-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. «Հայաստանի Հանրապետությունում սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների իրականացման 2018-2020 թվականների» ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) Հայաստանի Հանրապետությունում համարվում է սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացմանն ուղղված կարևորագույն տարրերից մեկը, որի իրականացումը հնարավորություն կընձեռի սննդամթերքի անվտանգության ապահովման նկատմամբ պետական վերահսկողության կատարելագործմանը և արդյունավետության բարձրացմանը, վտանգավոր սննդամթերքի հայտնաբերմանը, օգտահանմանը և (կամ) ոչնչացմանը, արտադրվող սննդամթերքի որակի բարձրացմանը, որն էլ իր հերթին հնարավորություն կստեղծի սննդամթերքի արտահանման ծավալների ավելացմանը, ինչպես նաև կօժանդակի Հայաստանի Հանրապետության ազգաբնակչությանը անվտանգ և որակյալ սննդամթերքով ապահովմանը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1147-Ն որոշման համաձայն սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողություն իրականացնող և «Սննդամթերքի անվտանգության մասին», «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն ծառայություններ մատուցող մարմին է ճանաչվել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն):

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1730-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության համապատասխան Ծառայությունն իրականացնում է մի շարք գործառույթներ, այդ թվում՝ կատարում է սննդի շղթայի բոլոր փուլերում (արտադրության, մշակման, բաշխման, պահման, փոխադրման, ներմուծման, արտահանման և իրացման փուլեր) վերահսկողական գործառույթներ, որոնց շրջանակներում մասնագետները Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի

հեկտեմբերի 16-ի N 1142-Ն որոշմամբ սահմանված կարգով իրականացնում են սննդամթերքի նմուշառում լաբորատոր փորձաքննության ներկայացնելու նպատակով:

4. Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության նպատակով իրականացվող փորձաքննությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքում լիազորված փորձարկման լաբորատորիաներում: Լաբորատոր փորձաքննությունները հանդիսանում են վճարովի ծառայություններ, որոնց ֆինանսավորումը նախկինում կատարվել է պետական մարմնի կողմից միջնաժամկետ ծախսային ծրագրերի իրականացման միջոցով:

5. Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ իրականացնող լաբորատորիաները հավատարմագրվում են ըստ փորձարկման ոլորտների՝ նշանակվում են որպես համապատասխանության գնահատման մարմին և ներառված են Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների միասնական ռեեստրում:

6. Ռազմավարական ծրագիրը համահունչ է «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Առևտրի համաշխարհային կազմակերպության «Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին» համաձայնագրին (Հայաստանի Հանրապետությունը համաձայնագրին անդամակցում է 2003 թվականի փետրվարի 5-ից):

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Ծրագրի իրականացման նպատակներն են.

1) սննդամթերքի անվտանգության և որակի ապահովման բնագավառներում միջազգային չափորոշիչների պահանջներին համապատասխան ունենալ հնարավորություն իրականացնել լաբորատոր փորձաքննություններ.

2) անասնաբուժասանիտարական, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված պահանջների տեսակետից բնակչությանն անվտանգ ու բարձրորակ սննդամթերքով և հումքով ապահովում.

3) սննդի շղթայի փուլերում վտանգավոր սննդամթերքի հայտնաբերում, դրա հետագա իրացման կանխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1060-Ն որոշմամբ սահմանված կարգով օգտահանում կամ ոչնչացում:

8.Ելնելով Ծառայության կողմից իրականացվող ստուգումներից, դիտարկումներից, ուսումնասիրություններից, ինչպես նաև հիմնվելով սպառողների դիմում–բողոքների վերլուծության վրա՝ ակնհայտ է Հայաստնաի Հանրապետության սպառողական շուկայում մեծ ծավալների անհայտ ծագման, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերով չուղեկցվող, կասկածելի որակ ունեցող և նույնականացում պահանջող սննդամթերքի առկայության փաստերը: Այս պարագայում անհրաժեշտություն է առաջանում Ծառայության կողմից

իրականացվող վերահսկողության ուժեղացման շրջանակներում նախորդ տարիների հետ համեմատ կատարել շուկայահանված սննդամթերքի ավելի լայն տեսակների լաբորատոր փորձաքննություններ և հաճախակի դարձնել վերջիններիս պարբերականությունը:

9. Ծառայութանը ներկայումս վերապահվել են վերահսկողական դաշտի ավելի լայն շրջանակներ, այդ թվում՝ լաբորատոր փորձաքննություններ իրականացնող հավատարմագրված լաբորատորիաների կողմից գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի փորձաքննության, անասնաբուժական դեղամիջոցների մնացորդային քանակների որոշման վերահսկողություն:

III.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

10. Ըստ նախնական գնահատումների՝ Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 10,000.0 հազ. դրամ:

11. Ծրագիրն իրականացվում է յուրաքանչյուր տարի «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ծրագրի գծով սահմանվող ֆինանսական միջոցների հաշվին:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

12. Սննդամթերքի որակի մեջ կան պիտանելիության բազմաթիվ ցուցանիշներ՝ 600-ից ավելի, այդ թվում՝ մանրէաբանական, սանիտարահիգիենիկ, ֆիզիկոքիմիական, մնացորդային նյութերի քանակների, նաև այնպիսի ցուցանիշներ, որոնք բնորոշ են միայն տվյալ սննդամթերքին: Հետազոտությունների գների սահմանը կազմում է 3000-30000 դրամ: Համաձայն 2015-2016 թվականների վիճակագրության, վերը նշված փորձաքննությունների մեջ գերակշռում են մանրէաբանական և թունավոր տարրերի հայտնաբերման փորձաքննությունները (որպես բարձր ռիսկայնության ցուցանիշներ), որոնց մասնաբաժինը նշված երկու տարիների ընդհանուր քանակի մեջ կազմում է համապատասխանաբար 62.37% և 18.08%, իսկ գների միջին ցուցանիշը՝ 5000 դրամ: Յուրաքանչյուր նմուշի համար լաբորատոր փորձաքննությունների քանակը կախված է ռիսկայնության աստիճանից և միջինում կազմում է 6 փորձաքննություն:

13. Ծրագրով նախատեսվում է 2018-2020 թվականներին իրականացնել սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ միջինը 333.34 նմուշների նկատմամբ, որոնց գնորոշման համար հիմք է հանդիսացել ինչպես նշված հետազոտությունների մասով 2015-2016 թվականների փաստացի տվյալները (2015թ. - 9628300 դրամի դիմաց ավելի քան 250 նմուշ, 2016թ. - 4998520 դրամի դիմաց ավելի քան 150 նմուշ), այնպես էլ հանրապետությունում նմանատիպ ծառայություններ մատուցող կազմակերպություններից կատարված հարցումների արդյունքում ստացված միջին գների ցուցանիշները՝ հետևյալ ծախսային հաշվարկներով.

1) մեկ նմուշի մեկ ցուցանիշի փորձաքննության արժեքը միջինում՝ 5000 դրամ,

2) փորձաքննության ենթակա միջին ցուցանիշների թիվը՝ 6,

3) մեկ նմուշ՝ 5000 դրամ x 6 ցուցանիշ = 30 000 x 333.34 նմուշ = 10 000.0 հազ. դրամ:

14. Ծրագրով նախատեսվում է յուրաքանչյուր տարի իրականացնել սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ միջինը 333 նմուշների նկատմամբ հետևյալ հարաբերությամբ՝

Հ/Հ	Միջոցառում	Ժամկետ	Պատասխանատվություն	Ֆինանսական միջոցներ (հազ.դրամ)
1.	166 փորձաքննության իրականացում	2018 թվականի 1-ին կիսամյակ	Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հաղթող ճանաչված կազմակերպություն	5000.0
2.	167 փորձաքննություն:	2018 թվականի 2-րդ կիսամյակ	Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով հաղթող ճանաչված կազմակերպություն	5000.0

V. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

15. Ծրագրի իրականացումը կնպաստի հանրապետությունում ազգաբնակչության համար անվտանգ և որակյալ սննդամթերքի ապահովմանը, սննդի շղթայում մարդու կյանքի ու առողջության համար ռիսկային գործոնների հայտնաբերմանը, դրանց վտանգավոր ազդեցության նվազեցմանը և/կամ բացառմանը, ինչը հնարավորություն կընձեռի գործնականում կիրառել «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սկզբունքները՝

1) ապահովել սպառողների առողջությունը.

2) արտադրող կազմակերպություններին ապահովել սննդամթերքի անվտանգության տեսակետից ապահով հումքով.

3) կանխել բնակչության շրջանում կենդանիների և մարդկանց համար ընդհանուր հիվանդությունների առաջացման և տարածման դեպքերը:

16. Ծրագրի միջոցառումների իրականացումից ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

1) ***քանակական***՝ Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքից և մարզերից հավաքագրված սննդամթերքի ավելի քան 333 նմուշների՝ մանրէաբանական, սանիտարահիգիենիկ, ֆիզիկոքիմիական, մնացորդային նյութերի քանակների հայտնաբերմանն ուղղված տարեկան միջինում 2000 լաբորատոր փորձաքննությունների իրականացում,

2) ***որակական***՝ Հայաստնաի Հանրապետության սպառողական շուկայում անհայտ ծագման, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերով չուղեկցվող, կասկածելի որակ ունեցող և նույնականացում պահանջող սննդամթերքի առկայության փաստերի բացահայտում:

ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ցուցանիշի անվանումը	Սննդամթերքիի լաբորատոր փորձաքննությունների իրականացում:
Համառոտ նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքից և մարզերից հավաքագրված սննդամթերքի նմուշների՝ մանրէաբանական, սանիտարահիգիենիկ, ֆիզիկոքիմիական, մնացորդային նյութերի քանակների հայտնաբերմանն ուղղված լաբորատոր փորձաքննությունների իրականացում
Նպատակը/կարևորությունը	Հայաստնաի Հանրապետության սպառողական շուկայում անհայտ ծագման, անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերով չուղեկցվող, կասկածելի որակ ունեցող և նույնականացում պահանջող սննդամթերքի առկայության փաստերի բացահայտում: Ազգաբնակչության համար անվտանգ և որակյալ սննդամթերքի ապահովում, սննդի շղթայում մարդու կյանքի ու առողջության համար ռիսկային գործոնների հայտնաբերում, դրանց վտանգավոր ազդեցության նվազեցում և/կամ բացառում:
Տեղեկատվության հավաքագրումը/աղբյուրը	Տեղեկատվությունն ակնկալվում է ստանալ Ծառայության համապատասխան ստորաբաժանումների մշտադիտարկումների արդյունքում: Տեղեկատվությունը հավաքագրվելու և վերլուծվելու է Ծրագրի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումների կողմից:
Հաշվարկման մեթոդը	Ծրագրի շրջանակներում իրականացվող փորձաքննությունների հաշվարկման հիմք են հանդիսանում վերջին երկու տարիներին իրականացված լաբորատոր փորձաքննությունների վիճակագրական տվյալները (փաստացի կատարված լաբորատոր փորձաքննությունների՝ ցուցանիշների քանակ, տեսակարար կշիռ, արժեք):
Տեղեկատվության սահմանափակումները	Սահմանափակումը գործնականում բացակայում է:
Ցուցանիշի տեսակը	Ցուցանիշը չափում է Ծրագրի ուղղակի արդյունքը:
Չափման միավորը	Փորձաքննություն

Ներկայացման եղանակը	Կատարողականները ներկայացվում են ամսական կտրվածքով թղթային տարբերակով:
Հաշվետվողականության ցիկլը	Տարեկան
Թույլատրելի շեղումը	Փաստացի կատարված լաբորատոր փորձաքննությունների ընդհանուր թիվն արժեքային արտահայտությամբ չի կարող գերազանցել Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 10,000.0 հազ. դրամը:
Պատասխանատվությունը	Տեղեկատվության ձեռք բերման և հաշվետվողականության համար պատասխանատու է «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը:

VI. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

17. Ծրագրի իրականացման հետ կապված ռիսկերը պայմանավորված են հնարավոր սննդային թունավորումների, ինչպես նաև սպառողների կողմից դիմում-բողոքների ավելացմամբ, որի հաղթահարման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել հետագծելիության սկզբունքով օջախի հայտաբերում, վտանգավոր սննդամթերքի հետկանչում, մեկուսացում և ոչնչացում:

VII. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

18. Ծրագրի արդյունավետ իրականացման համար կարևոր նախապայման է ծրագրի մոնիթորինգը, որը կիրականացվի «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի համապատասխան մասնագետների կողմից: Վերջիններս պարբերաբար կիրականացնեն Ծրագրի կատարման ընթացքի ուսումնասիրություն՝ Ծրագրի արդյունավետ իրականացմանը խոչընդոտող խնդիրները, հանգամանքները բացահայտելու և դրանց շտկման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար:

19.Մոնիթորինգի ժամանակ անհրաժեշտ է հետևյալ փոխկապակցված և փոխհամաձայնեցված միջոցառումների իրականացումը.

1) գնահատել, թե որքանով են իրականանում Ծրագրում նախանշված գործողությունները, բացահայտել դրանց արդյունքը, ինչպես նաև համեմատել ակնկալվող արդյունքի հետ.

2) տալ պարզաբանում չիրականացված գործողությունների համար և որոշել այն քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն այդ գործողությունների իրականացման համար: